Ծրագրային համագործակցության կառուցակարգ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար

Ֆինանսավորված է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Իրականացված է Եվրոպայի խորհրդի կողմից

# ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

**Ծրագիր՝ Մարդու իրավունքների ոլորտում կրթության և ժողովրդավարական քաղաքացիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում**

## Ո՞ւմ համար է օգտակար

- դպրոցի աշակերտների, որոնք կիրազեկվեն Մարդու իրավունքների և ժողովրդավարական քաղաքացիության կրթության մասին,
- կրթության ոլորտի մասնագետների, որոնք կկատարելագործեն դասավանդելու և ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ոլորտում ԺՔԿ/ՄԻԿ-ը խթանելու իրենց կոմպետենցիաները,
- ազգային մարմինների և նախարարությունների ներկայացուցիչների, որոնք կծանոթանան ԺՔԿ/ՄԻԿ-ի հետ և կներառեն այն դպրոցական ուսումնական ծրագրերի չափանիշներում:

## Ո՞վ է պատասխանատու ծրագրի համար Ծրագրի նպատակները

- նպաստել դպրոցական ուսումնական ծրագրերի կատարելագործմանը Արևելյան գործընկերության համապատասխան 6 երկրներում՝ ԺՔԿ/ՄԻԿ-ի ինտեգրման միջոցով,
- ամրապնդել ուսուցիչների՝ ԺՔԿ/ՄԻԿ-ը դասավանդելու և խթանելու կարողությունը,
- ԺՔԿ/ՄԻԿ-ի մասին կրթական նյութերը հասանելի դարձնել աշակերտներին և ուսուցիչներին Արևելյան գործընկերության 6 երկրներից յուրաքանչյուրում,
- խթանել ազգային կրթական քաղաքականությունը Արևելյան գործընկերության երկրներում ԺՔԿ/ՄԻԿ-ին համապատասխան:

## Ինչպե՞ս է աշխատելու ծրագիրը

- ԺՔԿ/ՄԻԿ հասկացությունների մասին վերապատրաստման շարունակական դասընթացների միջոցով,
- համակարգային գնահատման և շահառուներից և շահագրգիռ անձանցից հետադարձ կապի շեշտադրմամբ,
- փորձագիտության, մոտեցումների, գործիքների և մեթոդների համապատասխանեցման շեշտադրմամբ:

## Ծրագրային գործողությունները

- կարողությունների զարգացման մոդուլների մշակում Արևելյան գործընկերության 6 երկրներում՝ ԺՔԿ/ՄԻԿ-ը նախնական վերապատրաստման և առանց աշխատանքի ընդհատման վերապատրաստման ծրագրերում ինտեգրելու մասին,
- ԺՔԿ/ՄԻԿ-ի համակարգերի մասին հանձնարարականների մշակում յուրաքանչյուր երկրում՝ հենվելով քարտեզագրման վրա,
- ուսուցիչների կոմպետենցիաների մասին պիլոտային սեմինարների կազմակերպում համապատասխան երկրներում,
- Ղեկավար կոմիտեների հանդիպումներ, սեմինարներ, համաժողովներ, իրազեկման միջոցառումներ և հավասարը հավասարի մեթոդով փոխադարձ ուսումնական այցեր:

**http://eap-pcf-eu.coe.int**

**Ծրագրային համագործակցության կառուցակարգ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար**

Ֆինանսավորված է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Իրականացված է Եվրոպայի խորհրդի կողմից

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

**Ծրագիր՝ Մարդու իրավունքների ոլորտում կրթության և ժողովրդավարական քաղաքացիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում**

## Ի՞նչ կարժենա

- Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 800 000 եվրո:

## Ծրագրի տևողությունը

- Ծրագիրը կընթանա 2015 թ. հունվարի 1-ից մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը:
- Ծրագիրը մեկնարկել է 2015 թ. հունիսի 4-ին:

## Ո՞վ է պատասխանատու ծրագրի համար

- Ծրագիրը իրականացվում է Եվրոպայի խորհրդի կրթության հարցերով դեպարտամենտի համագործակցության և կարողությունների զարգացման բաժնի կողմից:

## Լրացուցիչ տեղեկությունների համար

- Կատիա Դոլգովա-Դրեյեր, Ծրագրի համակարգող, Տարածաշրջանային և երկկողմանի համագործակցության գրասենյակ, e-mail: Katia.Dolgova-Dreyer@coe.int

2014 թվականի ապրիլի 1-ին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնեցին, որ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ նպատակաուղղված համագործակցային աշխատանքներ կտարվեն «Ծրագրային համագործակցության շրջանակ»-ի (ԾՀՇ) սահմաններում:

Այս համագործակցային աշխատանքների միջոցով կբարելավվեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները ներպետական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ, որոնք, բացառությամբ Բելառուսի, Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, մերձեցնելով դրանք եվրոպական չափանիշներին մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավական պետության ոլորտներում :

ԾՀՇ ընդհանուր բյուջեն 2015-2017 թվականների համար կազմում է 33.8 միլիոն եվրո:

**http://eap-pcf-eu.coe.int**